ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2015թվականի N01

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով.

Դալար համայնքի ավագանին *որոշում է՝*

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի 2014թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հետևյալ ցուցանիշներով:

Դալար համայնքի 2014թ. տարեկան բյուջեի եկամտային մասով նախատեսված 63300.0 հազ. դրամ պլանի դիմաց փաստացի մուտքագրվել է 64996.5 հազ. դրամ, այսինքն պլանը կատարվել է 102.7%

Այդ թվում՝ /հազ. դրամ/	պլան	փաստ.	%
1.Հողի հարկ	5535,0	5545,1	100.2
2.Գույքահարկ	5245,0	5245.4	100,0
3. Տեղական տուրքեր	185.0	190,3	102.9
4.Հողերի վարձ. Վճարներ	970.0	907,5	93.6

5.Գույքի վարձ. վճարներ	250,0	280,0	112,0
6. Տեղական վճարներ	30,0	26.5	88.3
7. Վարչական տույժեր և տուգանքներից մուտքեր	32.9	32.9	100.0
8. Դոտացիա պետ. բյուջեի	33552.1	33552.1	100,0
9. Այլ դոտացիա	0	97.8	
10.Գույքի օտարումից մուտքեր	212.5	1831.4	861.8
11. Տարեսկզբի ազատ մնացորդ	17287,5	17287.5	100.0

Բյուջեի ծախսային մասով 2014թ.-ի համար նախատեսված 63300.0 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի կատարվել է 53292.1հազ. դրամ կամ պլանը կատարվել է 84.2 %-ով:
Այդ թվում, վարչական բյուջեով նախատեսված 45800,0 հազ. դրամի փոխարեն փաստացի ծախսվել է 42300.1 հազ. դրամ կամ պլանը կատարվել է 92.4 %-ով:

Որից՝ կառավարման ապարատի պահպանման ծրագրով նախատեսված 20639.0 հազ. դրամ պլանի դիմաց փաստացի ծախսվել է 20338.6 հազ. դրամ կամ պլանը կատարվել է 98.5%-ով:

Որից՝	**պլան**	**փաստ**	**%**
1. Աշխատավարձ(4111)	16800.0	16691.9	99.4
2. Պարգևատրում(4112)	1266.0	1260.2	99.9
3 Էներգետիկծառ.(4212)	250,0	250,0	100,0
4. Կոմունալծառ.(4213)	40,0	35,0	87,5
5. Կապի ծառ. (4214)	145,0	140.0	96.6
6.ԱՊՊԱ (4215)	33.0	33.0	100
7. Համակ. ծրագր.(4232)	200.0	184.2	92.1
8. Տեղեկատվ.ծառ. (4234)	165.0	128,0	77.6
9. Կառավ. ծախս.(4235)	100.0	0	0
10.Մասնագիտական ծառ.(4241)	100.0	76.5	76.5
11. Տրանսպ.միջոց. ընթացիկ նորոգում . (4252)	280.0	280.0	100.0
12. Գրասեն.նութեր (4261)	280.0	279.9	100.0
13. Տրանսպ.այլնյութեր(4264)	800,0	800,0	100,0
14. Կենց. նյութեր և տնտ. ապր.(4269)	180.0	180.0	100.0

Աղբահանության և սանիտարական մաքրման ծրագրով նախատեսված 1800,0 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի կատարվել է 1800.0հազ. դրամ կամ պլանը կատարվել է 100.0%-ով:

Մշակութային միջոցառումների կազմակերպման ծրագրով նախատեսված 1420,0 հազ. դրամ պլանի դիմաց փաստացի կատարվել է 1397.0 հազ. դրամով (98.4%):

Որից 700.0 հազ. դրամ ծախսվել է Մարտի 8-ի և Ամանորի տոնի առթիվ տոնական միջոցառումների կազմակերպման վրա, իսկ 697.5 հազ . դրամ ծախսվել է, սեպտեմբերի 1-ին առաջին դասարանցիներին և ամանորի առթիվ նվերների ձեռք բերման համար:

30,0 հազ. դրամ ծախսվել է համերգի և թատերական ներկայացումների տոմսեր գնելու համար:

Նախադպրոցական ուսուցման ծրագրով նախատեսված 14880.0 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի ծախսվել է 13117.0 հազ. դրամ «Դալարի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆինանսավորման համար (88.2%):

Հանրակրթական ուսուցում ծրագրով նախատեսված 300,0 հազ. դրամի պլանի դիմաց 300,0 հազ. դրամ գումար է հատկացվել «Դալարի դպրոց» ՊՈԱԿ-ին:

26.0 հազ. դրամ հատկացվել է «Համայնքների միություն» կազմակերպությանը:

Հարազատին կորցրած անձիք ծրագրով նախատեսված 1020,0 հազ. դրամի դիմաց 990,0 հազ. դրամի հուղարկավորության նպաստ է հատկացվել մահացած անձանց հարազատներին:

Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական օրերին աջակցության ծրագրով 550,0 հազ. դրամի պլանի դիմաց 540,0 հազ. դրամի այլ նպաստ է հատկացվել Ամանորի տոնի առթիվ մի շարք անապահով ընտանիքների:

Սոցիալապես անապահով անձանց աջակցության ծրագրով նախատեսված 2200,0 հազ. դրամ պլանի դիմաց 2200,0 հազ. դրամ այլ նպաստ է հատկացվել միակողմանի ծնողազուրկ երեխաներին, առաջին կարգի հաշմանդամներին, վագոն տնակներում ապրող անձանց, ինչպես նաև բուժման, ուսուցման վարձի և այլ նպատակներով:

Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրով 260.0 հազ . դրամ պլանի դիմաց 260.0 հազ. դրամ հատկացվել է «Արարատ2001» բարեգործ. և այլ հասարակական կազմակերպություններին:

Սպորտային միջոց. ծրագրով նախատեսված 200.0 հազ. դրամ պլանի դիմաց 200.0 հազ. դրամ հատկացվել է համայնքի սպորտսմեններին :

Ֆոնդային բյուջեով նախատեսված 17500.0 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի կատարվել է 10992.0 հազ. դրամ կամ պլանը կատարվել է 62.8%-ով :

Այդ թվում՝ 350.0 հազ. դրամ ծախսվել է սարքավորումների ձեռք բերման համար, 310.4 հազ. դրամ՝ վարչական սարքավորումների ձեռք բերման համար:

90.0 հազ. դրամ ծախսվել է համայնքի հողերի դաշտային հետազոտման և ագրոքիմ. քարտեզի կազմման աշխատանքների վրա:

835.0 հազ. դրամ ծախսվել է Արտաշատ-Երևան խճուղուն հարակից ցամաքուրդի հետլիցքի աշխատանքների իրականացման համար:

4785.0 հազ. դրամ ծախսվել է Պ. Սևակ և Զ. Անդրանիկ փողոցների ավազակապիճով կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

4621.6 հազ դրամ ծախսվել է կենտրոնական փողոցի արտաքին էլեկտրական լուսավորության անցկացման աշխատանքների իրականացման համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**